ԻՆՉՊԵ՞Ս ԳՏՆԵԼ CASp

CASp գտնելու համար այցելե՛ք DSA-ի CASp կայքէջ և սեղմեք Պայմանների մատչելիության հարցերով վկայագրված մասնագետների ցանկի հղումը: CASp մասնագետները, որոնց անվան դիմաց «Do Inspections» («Կատարել ստուգումներ») սյունակում նշված է «Yes» («Այո»), հասանելի են վճարովի հիմունքներով ստուգումներ իրականացնելու համար:

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ՀԻՇԵԼ ՍՏՈՒԳՈՒՄԻՑ ՀԵՏՈ

1. **ՊԱՀԵ՛Ք CASp-Ի ՍՏՈՒԳՄԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ ԶԵՐ ՖԱՅԼԵՐՈՒՄ:**
   Զեկույցը գաղտնի է և պետք է փոխանցվի միայն իրավախորհրդատուի ուղղորդմամբ, կամ եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Ինչևէ, կարող եք այս զեկույցը տրամադրել շինարարության ոլորտի այն մասնագետներին, որոնց վարձում եք՝ սահմանված պահանջներին համապատասխանությունն ապահովելու համար:

2. **ՀԵՏԵՎԵ՛Ք ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԶԵՐ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻՆ:**
   Սա կարևոր է, քանի որ ցույց է տալիս օրենքը պահպանելու և սահմանված պահանջներին համապատասխանությունն ապահովելու Ձեր մտադրությունը:

3. **ՊԱՀՊԱՆԵ՛Ք ԶԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԸ:**
   Հաստատեք պլան, որով հետևելու եք համապատասխանության պահանջներին: Ճշտեք Ձեր CASp մասնագետից, թե շինարարությանն առնչվող մատչելիության որ ստանդարտներն են պահանջում պարբերական տեխնիկական սպասարկում, և սահմանեք տեխնիկական սպասարկման ենթակա տարրերի կանոնավոր ստուգման կարգ: Վերանայեք գործառնական քաղաքականությունները, որոնք ժամանակ առ ժամանակ կարող են ազդել սահմանված պահանջների համապատասխանության վրա, և սահմանեք մատչելիությունն ապահովող ընթացակարգեր: Տեղեկացրեք Ձեր աշխատակիցներին տեխնիկական սպասարկման և գործառնական այն քաղաքականությունների մասին, որոնք ազդում են Ձեր հաստատության մատչելիության վրա:

4. **ՁԵՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԺԱՄԿԵՏ» ՉՈՒՆԵՆ:**
   Ձեր հաստատությունը CASp մասնագետի կողմից ստուգվելուց հետո կրկնակի ստուգման անհրաժեշտություն չկա, եթե հաստատությունում բարելավումներ կամ փոփոխություններ չեք իրականացնում: Եթե, այնուամենայնիվ, Ձեր հաստատությունում իրականացնում եք բարելավումներ, որոնց համար թույլտվություն է պահանջվում, դիմեք տեղական շինարարական մարմնին՝ խնդրելով, որ վերջնական ստուգումն իրականացնի իրենց աշխատակազմում ընդգրկված CASp մասնագետը, որպեսզի ստուգված տարածքի համար նախատեսված Ձեր իրավական առավելությունները պահպանվեն:

Բիզնեսի *և գույքի սեփականատերերի համար՝ ապահովելու իրենց հաստատությունների պայմանների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար*

www.dgs.ca.gov/DSA/Resources/CASp-Property-Inspection

DSA
DIVISION OF THE STATE ARCHITECT
DEPARTMENT OF GENERAL SERVICES

ՎԱՐՁԵՔ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԿԱՅԱԳՐՎԱԾ ՄԱՍՆԱԳԵՏ, ՈՎ ԿՕԳՆԻ ՍԱՀՄԱՆԵԼ ՁԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ:

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ CASp-Ի ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պայմանների մատչելիության հարցերով վկայագրված մասնագետները (CASp) քննություն են հանձնել նահանգային և դաշնային մատչելիության ստանդարտների վերաբերյալ իրենց գիտելիքները հաստատելու համար: CASp-ի կողմից իրականացված ստուգման և կազմված զեկույցի շնորհիվ, բացի Ձեր հաստատության մատչելիության կարգավիճակի մասին տեղեկանալուց, կարող եք նաև օգտվել իրավական առավելություններից:

ԻՐԱՎԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Դիմեք վաղ գնահատման խորհրդակցություն անցկացնելու խնդրանքով:
- Ստացեք դատական վարույթի 90-օրյա կասեցում:
- Նվազեցրեք օրենքով սահմանված նվազագույն վնասների հատուցման չափը 4,000 ԱՄՆ դոլարից մինչև 1,000 ԱՄՆ դոլար, եթե պարզվի, որ խախտել եք շինարարությանն առնչվող մատչելիության պահանջը, և խախտումը վերացնեք 60 օրվա ընթացքում:
- Լրացուցիչ առավելություններ որակավորված փոքր բիզնեսների համար:

Իրավական առավելություններից օգտվելու համար ստուգված հաստատությունը պարտադիր չէ, որ համապատասխանի շինարարությանն առնչվող մատչելիության բոլոր կիրառելի ստանդարտներին, սակայն գույքը պետք է CASp մասնագետի կողմից ստուգված լինի մինչև հայցի ներկայացումը: Բարելավումների Ձեր ժամանակացույցին համապատասխան խախտումների վերացման ուղղությամբ առաջընթացը կնվազեցնի կամ կվերացնի Ձեր պատասխանատվությունը:

Ի՞ՆՉ ԿՍՏԱՆԱՔ ՁԵՐ CASp-ԻՑ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Իրավական առավելություններից օգտվելու համար պայմանագրում պետք է նշվի, որ CASp մասնագետը կիրականացնի ստուգում և Ձեզ կտրամադրի զեկույց՝ Քաղաքացիական օրենսգրքի 55.53-րդ բաժնով նախատեսված «Շինարարությանն առնչվող պայմանների մատչելիության ստանդարտների համապատասխանության մասին օրենքի» (CRASCA) համաձայն:

ՍՏՈՒԳՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Այս փաստաթուղթը կներառի ստուգված տարածքների նկարագրությունը, ստուգման ամսաթիվը և Ձեր՝ պահանջների համապատասխանության կարգավիճակի վերաբերյալ եզրակացությունը.

Համապատասխանում է գործող ստանդարտներին

Ստորագրված և թվագրված ստուգման զեկույց, որում նշվում է, որ CASp մասնագետի կարծիքով՝ ստուգված տարածքները համապատասխանում են շինարարությանն առնչվող մատչելիության պահանջներին:

Ստուգվել է CASp-ի կողմից

Պարտադիր է նշել շտկման կարիք ունեցող բոլոր տարածքները և դրանցում անհրաժեշտ շտկումները: CASp մասնագետը կարող է համագործակցել Ձեզ հետ՝ յուրաքանչյուր շտկման աշխատանքն ավարտելու ողջամիտ ժամանակացույց սահմանելու համար:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

CASp մասնագետի կողմից տրամադրված՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ստուգման վկայականը կարող է փակցվել հաստատությունում: Խորհուրդ ենք տալիս փակցնել վկայականի գունավոր պատճենը, իսկ բնօրինակը պահել ապահով վայրում:

Ի՞ՆՉ ԿՀԱՐՑՆԻ CASp-Ը

1. Շինարարության ամսաթիվ՝ _____
2. Նախորդ բարեփոխումների/վերանորոգումների ամսաթվերը և հատվածները. _____

_____

_____

_____

_____

_____

3. Հանրությանը հասանելի տարածքները (հաճախորդներ).

☐ Մանրածախ առևտրի/ճաշելու/հանդիպումների տարածք

☐ Կայանատեղի

☐ Զուգարան(ներ)

☐ Այլ. _____

Եթե պատասխանների հարցում վստահ չեք, Ձեր CASp մասնագետը կարող է անհրաժեշտ ուսումնասիրություն կատարել կամ ուղղորդել Ձեզ՝ անհրաժեշտ տեղեկությունները գտնելու հարցում: